

յատուկ «հացով» (113), որ կատարելապէս կը համեմատի մեր հեթանոսութեան «ամանորայ ամենարեր ևորոց պտորոց տօնից հիւրընկալ դիցն Վանատրի» (Ագթ. 623), եւ կը յիշեցնէ Հրէից միւս «տօն ամաւրայնոյ առաջնոյ արմտեաց» (Եւք, ԻԳ, 16) կամ «օր ևորեաց» ըսուածը (Թիւք, ԻԸ, 26):

Տեսանք Տրդատայ պատարագներն ի նշան գոհութեան՝ իւր յաջողութեանց պատճառաւ: Միակ օրինակը չէ այդ. Վահան մամիկոնեան իւր յաղթական պատերազմներէն վերջ ի Դուին կու գայ, եւ հոն «գշնորհակալութեան պատարագն մատուցեալ Աստուծոյ արժանաւորապէս», կը կերակրէ աղքատները (Փրպ. 525): — Որբելեանը կը յիշէ զենումներ նաեւ խաչու եկեղեցի օրհնելու առթիւ (Հկճ. Ժ): — Վերջապէս Վենետիոյ գրչագրի մը մէջ, գրուած 1668ին, գտած եմ եօթն անհարազատ կանոններ յանուն Մանդակունւոյն, որոնք մատաղներ կը սահմանեն մեզաց թողութեան համար, բայց կատարեալ հրէական կոշտ ձեւով. «Մատուցէ Տեառն զուարակ վասն անգիտութեան եւ

1663ի օրինակը կը կարգայ «նորին տօնեացն», եւ տրպագիրը՝ «տօնին որ էանցն». երկուքն ալ սխալ: